«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱԼԱՇԿԵՐՏԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ՝ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/1

ք. Երևան «03» Մարտի, 2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի **Արթուր Սողոմոնյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՎԱՆԴ-ԳԱՍՍ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Գառնիկ Ներսիսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Արմավիրի մարզ Ալաշկերտի Խորքային հորի վերականգնում՝ ոռոգման նպատակով»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 120 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների **100** տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 6 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **12,969,230 (տասներկու միլիոն ինը հարյուր վաթսունինը հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ**, որից **2,161,538 (երկու միլիոն հարյուր վաթսունմեկ հազար հինգ հարյուր երեսունութ) ՀՀ դրամը**՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6. Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9. Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11. Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12. Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	ՎԱՆԴ-ԳԱՍՍ ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 09419634
Հ/Հ՝ 900018001231	Հ/հ՝ 15700-11766900100
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Գործադիր տնօրեն	Տնօրեն՝
Կրթուր Սողոմոնյան	Գառնիկ Ներսիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Սույն պայմանագրի կատարումն իրականացնելու համար անհրաժեշտ է ***<<Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում>>*** *լիցենզիա «**Բնակելի,հասարակական և արտադրական**» ներդիրով:*

Հավելված թիվ 1
«03» Մարտի 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *
«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱԼԱՇԿԵՐՏԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ՝ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

hh	Գնացուցակ անվանումը և համարը	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը հազ.դր.	Ընդհ. արժեքը հազ. դրամով
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
		Հորատանցքի վերականգնում				
1	E1-968	Հորատանցքի տարածքի մաքրում	մ3	9.0	3.0	27.000
2	P23-229 C310-1	Հողի և աղբի բարձում ե հեռացում 3կմ	տն	18.0	3.0	54.000
3	E4-56	Հորատանցքի ռոտորային հորատում III կարգի գրունտներում մինչև 100մ	մ	85.0	30.0	2,550.000
4	7-300 31 M շուկա	Խորքային պոմպի ագրեգատ ЭЦВ12-160-65 H=60մ,N=45կվտ	կ-տ	1	1500.0	1,500.000
5	E22-68	Ջրհան խողովակ Φ159x6 ՊUS 632-80	գմ	35	16.0	560.000
6	E22-68	Պողպատե խողովակ Φ159x6 Դ ՊUS 10704-76	գմ	29	12.3	355.685
7	E22-117	Պոլիէթիլենե պեզոմետրիկ խողովակ Φ25մմ ՊUS 8732-78	գմ	26	0.8	20.800
8	E22-433	Կցաշուրթի մոնտաժ N1 Dպ=150մմ, Pպ=100ՄՊա	հատ	2	3.9	7.722
9	իտ	Կցաշուրթ N1 Dպ=150մմ, Pպ=100ՄՊա	կգ	13.25	6.9	91.968
10	E22-362	Մետաղական թերթեր	կգ	38.1	0.8	30.480
11	իտ	Հեղյուս-մանեկ	կգ	12.4	1.9	23.560
12	E22-362	Ծունկի տեղադրում a=90 աստիճան	կգ	1	1.4	1.400
13	իտ	Ծունկ a=90 աստիճան	հատ	1	9.9	9.900
14	E15-613	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	մ2	30.1	0.9	28.144
15	E37-727	Ամրան A500c	կգ	35.8	0.7	25.060
16	E4-337	Ջրի արտամղում օդամբարձ եղանակով՝՝՝՝՝՝՝՝՝՝<<էռլիֆտով>>	օր	2	236.0	472.000
17	8-661-1	Մալուխի անցկացում ВПВ 35	100մ	1.2	142.0	170.400
18	E18-226	Մանոմետր	հատ	1	7.0	7.000
19	իտ	Մետաղական խողովակ 219*4	գմ	1.4	18.0	25.200
20	E22-68	Պողպատե խողովակի հենարանների համար Φ159x4 Դ ՊUS 10704-76	գմ	0.9	12.0	10.800
21	E6-128	Բետոնե գետնախարիսխի և հիմքի կառուցում B12,5 F150 W6դասի բետոնով	մ3	1.9	83.0	160.190

22	E6-1	Բետոն B7,5 հարթեցնող շերտի պատրաստում	մ3	0.2	46.0	9.200
23	P5-67	Խճե հենքի պատրաստում	մ3	0.7	12.0	8.400
24	E8-64	Ներդիր մետաղական մասերի տեղադրում	կգ	15.6	0.8	12.870
	Ընդամենը					6161.77875
		1.Խորքային հողի ցանկապատ				
1	E6-20	Բետոնե հիմքերի կառուցում B12,5 F150 W4դասի բետոնով	մ3	0.8	42.0	33.600
2	E6-128	Բետոնե գետնախարիսխի և ժապավենավոր հիմքի կառուցում B12,5 F150 W4դասի բետոնով	մ3	1.3	49.0	62.230
3	E9-121 ինֆոր	Մետաղական կանգնակների և ցանցավոր շրջանակների տեղադրում	տն	0.34	550.0	187.000
4	E22-65	Պողպատե խողովակ Φ89x3	գմ	22.5	4.3	96.750
5	E6-83	Մետաղական ներդիր տարրեր 120x100,93x93	տն	0.026	550.0	14.300
6	Ինֆոր.	Մետաղական անկյունակ L=50x50x4	գմ	59.4	1.9	112.860
7	Ինֆոր.	Ցանկապատի մետաղական ցանց N50-2,5	մ2	26.94	1.4	38.255
8	Ինֆոր.	Բռնակ,ականջ	կգ	0.6	0.4	0.240
9	Ինֆոր.	Ծխնի	հատ	2	0.4	0.800
10	Ինֆոր.	Փական	հատ	1	4.3	4.300
11	E15-613	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	մ2	27	0.2	5.400
	Ընդամենը					555.7
		2.Հողային աշխատանքներ				
1	E1-961	Ցանկապատի տարածքի հարթեցում IIIկարգի գրունտներում	մ3	1.63	2.00000	3.260
2	E23-2	Խճի փռում ցանկապատի տարածքում	մ3	1.5	1.73000	2.595
3	E1-961	Փոսորակի մշակում IIIկարգի գրունտներում	մ3	7.7	1.73000	13.321
4	E1-968	Ետլիցք IIIկարգի գրունտներից հիմքերի կողքերը	մ3	5.1	1.08000	5.508
5	E1-968	III կարգի գրունտների հարթեցում տեղանքում	մ3	2.6	1.08000	2.808
	Ընդամենը					27.49200
		Էլեկտրամատակարարման վերականգնում				
1	8-25-1	տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման LSԵ-100/6 100ԿՎԱ 6/0, 4ԿՎ /կազմը ըստ նախագծի/	կ-տ	1	1,800.000	1,800.000
2	8-91-4	Անկյունային պողպատ	կգ	97.7	0.60000	58.620
3	E11-11	Բետոն B12,5 F150 W4դասի	մ3	0.310	39.00000	12.090
4	E6-1	Բետոն B7,5 F150 W4դասի	մ3	0.56	32.00000	17.920
5	E6-16	Միաձույլ ե/բ սալի իրականացում B15 դասի բետոնով	մ3	0.17	38.00000	6.460
6	ԻS	Ամրան Φ10A500cդասի	տն	0.024	450.00000	10.800
7	E1-961	Փոսորակի մշակում IIIկարգի գրունտներում	մ3	1.2	1.60000	1.920

8	8-289-2	Հողանցման կոնտուրի պատրաստում	հատ	1	2.80000	2.800
9	8-472-3 ինֆորմ	Շերտապողպատ 40x4մմ	գմ	30	1.20000	36.000
10	8-471-1	Պողպատ անկյունակային 50x50x5մմ L=2,5մմ	հատ	6	14.00000	84.000
11	E1-961	IIIկարգի գրունտի մշակում հողանցման տեղադրման համար	մ3	9	2.54200	22.878
12	E1-961	Ետլիցք տոփանումով	մ3	9.1	1.07000	9.737
13	E1-961	Ավելցուկ գրունտի հարթեցում տեղում	մ3	1.1	1.07000	1.177
14	E1-961 Գ=1,1	III կարգի հողի լրամշակում ձեռքով	մ3	1.6	2.00000	3.200
15	E1-968	II-րդ կարգի հողի ետլիցք ձեռքով	մ3	1.4	1.06500	1.491
16	P21-417	Խարսխային ե/բ հենարանի մոնտաժ	հատ	1	98.00000	98.000
17	P21-416	Ե/բ հենարանի մոնտաժ	հատ	1	48.00000	48.000
18	8-11,-1	Գծային բաժանիչ РЛМД 10-1, ПРН3-10 տիպի շարժաբերով	հատ	1	128.00000	128.000
19	Ի.Տ.	50x50x5մմ անկյունակներ	գմ	3.9	2.10000	8.190
20	Ի.Տ.	Հեղույս-մանեկ	կգ	0.64	2.10000	1.344
21	E6-2	Բետոնե հիմքերի պատրաստում B15 բետոնով	մ3	1.2	39.00000	46.800
22	8-368-2	Օդային 10կվա գծի վերականգնման համար 25քմմ կտրվածքով հաղորդալարի անցկացում	կմ	0.264	165.00000	43.560
23	8-521-2	Ղեկավարման կայանի մոնտաժ САУ200	կ-տ	1	210.00000	210.000
	Ընդամենը					2652.98700
	Ընդամենը	**Ինքնարժեք**				9,397.993
		Շահույթ	15%			1,409.699
		Արժեք				10,807.691
		ԱԱՀ	20%			**2,161.538**
		Ընդամենը				**12,969.230**

* Կապալառուն աշխատանքները կատարում է **ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱԼԱՇԿԵՐՏ համայնքում**:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՎԱՆԴ-ԳԱՍՍ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 15700-11766900100
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն՝
Գարնիկ Ներսիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
«03» Մարտի 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱԼԱՇԿԵՐՏԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ՝ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	***ՀՀ Արմավիրի մարզ Ալաշկերտի խորքային հորի վերականգնում՝ ոռոգման նպատակով***	***Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը***	***120 օր***
ԸՆԴԱՄԵՆԸ			***120 օր***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՎԱՆԴ-ԳԱՍՍ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 15700-11766900100
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
«03» Մարտի 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի													
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	Ընդամենը
1	**45261148/502**	**Ստորգետնյա հորատման աշխատանքներ**	...	**12,969,230**	**12,969,230**	**12,969,230**	**12,969,230**	**12,969,230**	**12,969,230**	**12,969,230**	**12,969,230**	**12,969,230**	**12,969,230**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՎԱՆԴ-ԳԱԶ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 15700-11766900100
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 4
«03» Մարտի 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Հավելված 4.1
«03» Մարտի 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
«03» Մարտի 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱԼԱՇԿԵՐՏԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ՝ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՎԱՆԴ-ԳԱՍՍ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 15700-11766900100
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 6
«03» Մարտի 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱԼԱՇԿԵՐՏԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ՝ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Շինարարական նյութերի և սարքավորումների տեխնիկական բնութագիր

Չափաբաժնի համար	Առաջարկվող սարքերի և սարքավորումների					
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
1	Погружной центробежный агрегат	ЭЦВ 12-160-65 нро	ЭЦВ 12-160-65 нро	Ливенский завод погружных насосов	*տես ստորև	6 ամիս
1	Մանոմետր	Մանոմետր МТ - 160	ТУ BY 101472320.001-2002	МЦ-Багория	*տես ստորև	12 ամիս
1	Տրանսֆորմատորային ենթակայան	100ԿՎ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐ ՏՄԳ	100ԿՎ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐ ՏՄԳ	Кентауский трансформаторный завод	*տես ստորև	3 տարի

ЭЦВ 12-160-65 нро տեխնիկական բնութագիր

Типоразмер электронасоса	Номинальные параметры электронасоса					Габаритные размеры в мм, не более		Масса, кг, не более	Диаметр скважины, мм
	Подача, м3/час	Напор H, м	Ток, I, A	КПД %	Мощность двигателя, кВт	D	L		
ЭЦВ 12-160-65 нро	160	65	93	86	45	281	1345	220	301

Մանոմետր МТ – 100 տեխնիկական բնութագիր

Группа защиты от проникновения твердых частиц, пыли и воды
по ГОСТ 14254-96: IP40

Диаметр корпуса, мм
160

Диапазон показаний, МПа
от 0 до 0,4; 0,6; 1,0; 1,6; 2,5; 4,0

Рабочий диапазон температур окружающего воздуха, °С
-50...+50

Межповерочный интервал
2 года (поверка произведена в аккредитованной лаборатории)

Класс точности:
1,5

Исполнение:
Корпус - сталь, окрашенная в черный цвет; Стекло - техническое

Штуцер и трибко-секторный механизм
Латунь

Присоединительная резьба:
М 20х1,5 (G1/2)

* Տրանսֆորմատորային ենթակայան- տեխնիկական բնութագիր

Լրացում՝	ԼՏԵ 100ԿՎ ՎԱՀԱՆԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ		
N N	Անվանումը	Չ/Մ	Քանակ
1	100ԿՎ ՏՐԱՆՍՖՈՄԱՏՈՐ ՏՄԳ	հատ	1
2	ՎԱՀԱՆ ԿՏՊ	հատ	1
3	ՀԱՏԻՉ 250Ա	հատ	1
4	ԱՊԱՀՈՎԻՉ ՊԿ.10кв.16а	հատ	3
5	ՊԱՊՐԻՉ ՌՎՕ-10	հատ	3
6	ՏՐԱՆՍՖՈՄԱՏՈՐ ՀՈՍԱՆՔԻ 150/5	հատ	3
7	ԱՆՋԱՏԻՉ ԱՎՏՈՄԱՏ ԵՌԱԲԵՎԵՌ 160Ա	հատ	1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՎԱՆԴ-ԳԱՍՍ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 9/46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/հ՝ 15700-11766900100
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն՝
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/
Կ.Տ